վերջավորությամբ Երեւանից է երանց անդադրությունը: Եթե միջնադարյան հայ հարտարապետական հուշարձաններում լուսամուտները (մանավանդ երբ երանք թվով ութն են) բազմում են աշխարհի կողմերի ուղղությամբ (չորսը դեպի հյուսիս-հարավ, արեւելք և արեւմուտք, իսկ մյուս չորսը՝ շեղված 45°-ով), ապա Մուղնիում լուսամուտները այս սխեմային չեղված են 22,5°, նրանք իրենց բարձրությամբ թմբուկի համեմատ փոքր են 2,5 անգամ: Լուսամուտների ու թմբուկի թիվը միջև ընկած քաղախան մեծ մակերեսովը հարգարհուս համար լուսամուտները վերն քանդակված են երկու մասով՝ հենյալ ա. Գեորգը և խաչ, որոնք մեկնեցնելը հաջորդում են իրար: Իսկ թիվից ենթին թմբուկի օգտվում է կիսադաշնիկի կտրվածքով մի գոտի: Գլմբուկին ունի հովհարանն ծածկու Այսպիսի լուսամուտ դիտելիս քաղախան թեթևացնում է եկեղեցու զգուրթը, քաղմադախանության մտցնում հուշարձանի ծածկերի միտրինակ հարթությունների մեջ: Եկեղեցու տանիքի լուսամուտը նույնպես տարբերվում է Հայաստանի նույնատիպ հուշարձանների ծածկի լուսամուտներից: Եթե գործնավոր բաղիթիկներում (ինչպես VII դ., այնպես էլ XVIII դ.) կառուցվածքի վերին մասն ունի խաչանն հորինվածք, ընդորում բովական ընդգծված, ապա Մուղնիում այդ շատ թույլ է պատահալովում: Այստեղ կողքի նավերի հյուսիսանկյան և հարավարեւմտյան անկյունները, ինչպես և ավանդատան ծածկերի իրենց բարձրությամբ համարյա չեն դիտում գլխավոր նավի բարձրությանը: Նրանց տանիքների լանջերը ցածր են գլխավոր նավից ընդամենը թիվը բարձրության չափ: Սա հատկապես ցայտուն է երևում արեւելյան ճակատում, որտեղից եկեղեցին թվում է ընդհանուր երկթեց տանիքով ծածկված:

Մուղնու եկեղեցու ճակատների (հյուսիսային և հարավային) զազաթներին տեղադրված են եկեղեցու գործիքի քարե մոզելներ: Նրանք տարբեր մշակում ունեն՝ հարավայինն ունի քաղմախիսա թմբուկ և բրգանն վեղար, իսկ հյուսիսայինը՝ կլոր թմբուկ և հովհարանն ծածկու Այս մոզելներն ունեն դեկորատիվ բնույթ և պատկանում են միջնադարում հայ հարտարապետության մեջ տարածված մոզել-ադրուտների թվին²⁷: Այսպիսի մոզելներով են պսակված Հաղարատի Ս. Նշան, Գանձասարի, Բարեբաքալ ա. Գրիգոր վանքի, Հովհաննավանքի, Գեղարդի գլխավոր եկեղեցիների ճակատները: Ուշ միջնադարում նրանք սակավ են հանդիպում: XVIII դարի հուշարձաններից կարելի

է նշել Երեւանի Զորավոր եկեղեցու արեւմտյան ճակատի մոզել-ադրուտները:

Մուղնու ա. Գեորգ եկեղեցու՝ արտաքին հարգարհնում մեծ դեր է խաղում քաղմադախությանը: Երեւանյայի՝ ավյալ դեպքում տեղական տուֆի տարրեր գույնի քարերի հմուտ օգտագործումով հարտարապետներն այս կառուցվածքում հասել են մեծ հաջողության, որի շնորհիվ Մուղնու եկեղեցին այն է ընկնում ոչ միայն ուշ միջնադարի, այլ ընդհանրապես հայկական հուշարձանների մեջ: Դեռ վաղ միջնադարից սկսած հայ հարտարապետության մեջ դեկորատիվ հարգարհների միջոցների շարքում կարեւոր տեղ ունի բնական քարի գույնի, ֆակտուրային հատկությունների օգտագործումը: Քաղմադախությանը մեծ դեր է նշանակություն է ստանում I—XIV դարերում, հատկապես Անիի աշխարհիկ և պաշտամունքային կառուցվածքներում, ապա Հայաստանի վանքային անապոսներում: Տարբեր գույնի քարերով կառավարում էր պատերի, շքամուտքերի տիպականների մակերեսների դեկորատիվ մշակումը, ընդ որում խճանկար հիշեցնող այս հարգարանքը իրականացվում էր միևնույն հարթության մեջ: XIII—XIV դդ. հարտարապետության օգտագործության շրջանում, գույնի օգտագործման մեթոդները փոփոխություն կրեցին, հարթ մակերեսների հետ միասին սկսեցին ձևավոր քարերն օգտագործել ուղիղֆային բնույթի հարգարաններում, քաղմադախությանը դուրսկցվեց լույսատվերի խաղի հետ²⁸, Գույնը դարձավ հարտարապետական տառնակին ճանգրվածների, զարգացանդակների առանկին տարրերի ընդգծման միջոց: Ընդ որում գունային և լուսային էֆեկտները չեն հակասում, այլ լրացնում են միմյանց:

Ուշ միջնադարում եւ շարունակվեց քաղմադախության օգտագործումը հարտարապետական հուշարձաններում: Այդ հատկապես վերաբերվում է Գողթան և Երեւանի քաղմադախի վանքային տառնակների: Երեւանի ա. Կարապետ վանքի եկեղեցու ստորին մասը կառուցված է երկու գույնի քարերի շախմատանն շարվածքով: Փառակային ա. Հակոբ վանքի եկեղեցու պատերի ստորին մասը շարված է սև և կարմիր քարի իրար հաջորդող շարքերով, իսկ վերին մասը՝ շախմատանն:

Մուղնու ա. Գեորգ եկեղեցում շախմատանն շարվածք՝ սև և դեղին տուֆից օգտագործված է բոլոր չորս ճակատներում, ընդ որում միայն վերին բնույթ՝ ճակատներին եռանկյունանն հարթության

²⁷ Paolo Cuneo, Les modèles en pierre de l'architecture arménienne, Revue des études arméniennes, v. VI, Paris, 1958.

²⁸ А. Л. Яковлев, Некоторые закономерности особенностей средневековой архитектуры Бахка, Восточной Европы, Закавказья и Средней Азии, - Византизм и армянство, М., 1972, т. 33, стр. 174.

մէջ Ռելսկս արգեն էշվնց, գմբքի թմբուկը նույնպէս շարժւած է երկու տարրեր զայնի յարե-
րից: Մուզնու կնկնկցում բազմազանությունն պ-
տադրովւած է տեղանիկ առումով ավելի մէջա,
քան նընդամուսն և Փառակայում: Եթէ այս երկու
հուշարաններում պատկերի տարրին մասերը լուծ-
ւած են խնամկար հիշեցնող քարի շարժմամբ,
որը կառուցվածքի տարրին մասի թիվնաքման
պատրաստ է ստեղծում, ապա Մուզնում, քեզա-
կապէր, բազմազանությունը պիտի է կնկնկցու
ողջ ժամայի թիվնաքմանը զեպի վեր ուղղու-
թյուն: Մուզնում բազմազանությունն պատ-
գործված է ոչ միայն պատկերի մանրաններում,
այլև ժամաշաշնի տարրերում: Կարմիր քարից են
քանդակված սրահի մուկերի առաջախոսանքով
մշակված իմպրես-թիվերը, շրամուտայի զարդա-
գործիներից մեկը, ամիպակի խաշարը, զեզաշ-
նակն ճակատներում լանդերի վերնում արցունքով
զարդաքանդակները: Այս է պատճառը, որ Մուզ-
նու հիմնականում մուգ քարից կառուցված ճան-
րանիստ հորինվածք ունեցող ժամաշառաքա-
կան հորինվածքն ընդհանուր առումով թաղան է
բազմապէս կենսաբան, անուշագեղ պազմաքանություն:
Մրան նպատակ է և կամարակապ բաց սրահը՝
զանդակատան թիվն աշուխարհով, քանդակա-
գործ շրամուտերը և գմբքի հովհարան ծած-
կը:

Մուզնու կնկնկցու զուսագեղությունը հարա-
տանում է ընդգծվում է շրջակա բնապատկերի
շեղծիմ: Այն դիտվում է հարափն շրջակա աշի-
ների կանաչ, արեկրից՝ լեռների զեզաշաղկա-
կապէս, արևմուտքից՝ երկնի զապույտ ֆոնի
վրա և աշի:

Մուզնու վանքի աշխարհիկ շինությունները
հիմնականում համախմբված են համայնի հյու-
սիսարևմտյան անկյունում: Այդպիսի անզարդու-
թյունը նպատակահարմար է ֆունկցիոնալ տեա-
կանքի, երանք գտնվում են վանքի մուտքի մոտ և
բնակիչի սենյակները ստանում են բարենպաստ
կողմնորոշում՝ յուսամուտները քաջվում են զեպի
հարավ:

Բնակիչի սենյակների հորինվածքը Մուզնում
կրկնում է ուշ միջնադարի Հայաստանի վանքային
համայնիների նույնատիպ շինությունների սին-
ման: Այն բաղկացած է թաղակալ, զեպի բակ
նայող սրահից, որի ներսում զանք են քաջվում
զեպի սրահի երկու կողմերում զաստիճանով բնա-
կիչի սենյակները: Այդպիսի լուծում ունեն Սյունի-
քում Տաթևի վանքի, Գեղզվանքի, Այրարատում՝
Գեղարքի, Հավոյթ թառի, Աջուց վանքի, ետրի-
բապի (XVII—XVIII դդ.) բնակիչի շէնքերը:

Մուզնու վանքում բնակիչի սենյակները երեքն
են, որոնք խմբավորված են երկու թաղակալ բաց
սրահների շուրջը (սենն 25×5,1 մ լափեր): Այս
վերաբերում է առաջին հարկին, որովհետև երկ-
րորդ հարկի այժմ արգեն քանդված սենյակների
զաստիճանությունը գմբար է վերականգնել: Բնակիչի
համայնի հարավային հատար կառուցված է
սրբապատ առջի քարից: Այստեղ եւ շար-
վածքի կարանները ընդգծված են շաղախով՝ ժուկա-
տը զարկ է զարդաքանդակներին: Միակ զեկարտով
տարրը սրահների կամարների պարզունակ խ-
պատաներն են: Լուսամուտները տարրեր լափերի
են և ունեն ուղղանկյուն բացվածքներ: Սենյակ-
ները միևնույն երկարության զեզքում (5,1 մ)
սենն տարրեր լափություններ (2,55—3,36—3,70
մ): Ուղղանկյուն են, զանաւն թաղակալ ծածկով:
Ներսում, պատերի մէջ կան միջնադարյան վան-
քային համայնիների բնակիչի սենյակներին պար-
տադիր շաղախաններ (տեաւանակն նշանակու-
թյան խորշեր) և բուխարիներ: Արևմտյան սրահի
հյուսիսարևելյան անկյունում, պատի հաստության
մէջ եւ զեպի երկրորդ հարկ տանող ուղղանկյ
անցք՝ առտրաններով: Մինչև XIX դ. երբ շրտից
կառուցվել են քարի առտրաններ, այս անցքն է
ծառայել, համանաքար, երկու հարկերի միջև որ-
պէս հաղորդակցության միջոց:

Բնակիչի սենյակների շարքին ուղղահայաց,
երանց լեռ միամասնակ, պարթեպների հյու-
սիսարևելյան անկյունից արևելյան պարթեպապ-
տին կից կառուցված է շինությունների մի խումը
Հյուսիսարևելյան են և երկար սենյակը, որը յու-
սամուտ լուծի, անկապակ, ծառայել է որպէս
միջնաքն: Հյուսիսից հարավ եզված թաղակալ
զանկեր, որի մուտքը քաջվում է սրահից, իր
նկով և լափերով համապատասխանում է վանքա-
յին համայնիների սեղանատներին: Երեք լաւն և
բարձր, ուղղանկյուն յուսամուտներ քաջվում են
զեպի արևմուտք: Գահլին ունի բազմակն մեծ
խորշեր, իսկ արևելյան պատի մէջ, որը միամա-
սանակ վանքի պարթեպն է, կա բուխարի: Գահլին
հարավ-արևելյան անկյունից զուս է քաջվում զե-
պի մի ալլ սենյակ, որի թաղակալ ծածկը ուղղա-
հայաց է զահլին ծածկի առանցքին: Վերջինս,
համանաքար, ծառայել է որպէս սեղանատան խո-
հանք: Երեք ալլապի հորինվածքն ունեն Գեղ-
զվանքի, Հավոյթ թառի XVII դ. սեղանատները:
Ը. Ողթադարյանը Մուզնու վանքի սեղանատուն
համարում է համայնի հարավարևելյան անկյան
այժմ լրիվ քանդված շինությունը¹⁴, Սահյան վեր-

¹⁴ Ը. Ողթադարյան, Մուզնու վանք և երա ժամանակ պա-
նակարտները, էջ 37:

չինս բազմական ենզ է (Ճտւ 2 մար) և իր շափերով ու ձեռով ինչպես և կառուցողական տեխնիկայով ի համապատասխանում Հայաստանի ուշ միջնադարի վանքերի սեզանատաներին:

XIX դարի վերջում կառուցված են Մուղնու սեզանատան երկրորդ հարկը տանող քարե աստիճանները: Նրանք կից են բնակիչի սենյակների հարավային պատին և փակում են վերինիս կամարակապ սրահը: Այս պատճառով աստիճանները իրականացված են կիսակամարի ևն ունեցող բացվածքի վրա, որը և Հնարավորութուն է ստեղծում աստիճանների տակով անցնել զնայի սրահը: Կառուցված լինելով նույն սրբատաշ ասֆից, աստիճանները համահնչուն են ողջ համայնքին, իրենց կամարի ինքնատիպ ձևով աշխուժացնում են բազմական անհետաքրքիր արտաքին ճակատներ ունեցող բնակիչի և կոմունալ սենյակների այս խմբի տեսքը: Սեզանատան երկրորդ հարկից ոչինչ չի պահպանվել: Սակայն նրա արևմտյան պատի վերին հզրում, քարերի մեջ ֆոնդված, իրարից նույն Հնարավորության վրա գտնվող փոսիկները հիմք են տալիս ենթադրելու, որ այստեղ բաց պատշգամբ է եղել:

Մուղնու վանքի համայնքի բաղկացուցիչ մասն է կազմում միջնադարյան մի այնպիսի Հնտաքրքրական կառուցվածք, ինչպիսին աղբյուրն է: Այն տեղադրված է վանքի հյուսիսարևմտյան կողմում, պարսպին մոտ: Ուղղանկյուն (2,0×2,5 մ ներքին չափերով), Թաղակապ, մեկ Թաղակիր կամարով, երկթեք ծածկով (այժմ չի պահպանվել) կառուցվածք է, որն իր բարձրության կեսից ավելի Թաղված է հողի մեջ: Հայաստանի վանքային այսպիսի անսամբլներում աղբյուրների առանձին շենքերի սակավ ենք հանդիպում: Հազրատի և Սանահնի նշանավոր աղբյուրները գտնվում են վանքից դուրս, զգալի Հնոսմարության վրա և փատորեն ողջ բնակավայրին են սպասարկում: Տաթին վանքի (XVII դ), Սանահնի (XIX դ.), և էշմիաձենի Գյալանի կնիկներում աղբյուրներն ունեն նույն Հորինվածքը, նրանք ուղղանկյուն, Թաղակապ, երկթեք ծածկով և երեք կողմից որմնափակ շինություններ են, որոնք ծածկում են աղբյուրն ու ջրավազանը և զլխավոր ճակատում կամարակապ

մեծ բացվածք ունեն³⁵, Մուղնու աղբյուրն արմատապես տարբերվում է նշված կառուցվածքներից: Նրա կարևոր առանձնահատկությունն այն է, որ այստեղ զուգակցված են աղբյուրը և ջրամբարը: Կալն խողովակներով ջուրը բերվել է զնայի աղբյուր և նրա հյուսիս-արևելյան սենյակից լցվել ներս: Հավանված ջուրը մաքրվելով ջրամբարում (խառնուրդները նստվածք առնող անջատվում են) հոսել է դուրս աղբյուրի հարավային պատի մեջ Թողնված անցքից: Այստեղ քարե պահուսնակային ջրորոգան է լինված, որը հնչուսացնում է ջուր վերցնելը: Ջրամբարի հետ զուգակցումն է պատճառ, որ աղբյուրը կիսազետևափոր են կառուցել: Սա պահպանում է աղբյուրի ջրերը ձմռանը սառչելուց, իսկ ամռանը տաքանալուց: Մուղնու աղբյուրն այս ինքնատիպ Հորինվածքով առանձնանում է Հայաստանի միջնադարյան նույնատիպ կառուցվածքների շարքում:

* * *

Մուղնու վանքի ճարտարապետական համայնքը և նրա առանձին կառուցվածքները ունենալով XVII դ. հայ ճարտարապետական հուշարձաններին բնորոշ ենք և Հորինվածքներ, իրենց առանձնահատկություններով, զեղազրուական մեծ արժանիքներով, մասնագիտական բարձր մակարդակով իրականացված լուծումներով դասվում են Հայաստանի ուշ միջնադարի լավագույն անսամբլների շարքում: Հատկապես արժեքավոր է կնիկներու հարդարանքն իր նուրբ, պլաստիկ քանդակներով, բազմազանությամբ: Ժիշտ է, Մուղնիում Ե...չկա այն Թափն ու լայն ընդգրկումը, որը հատուկ է նախորդ դարաշրջանի վարպետների ստեղծագործություններին, սակայն այն չի հանդիսանում գոյություն ունեցող մեծերի ընդգրկանություն: Առանձին զնայիցում դարաշրջանի վարպետների ստեղծագործությունները մի շարք զնայիցում ստեղծել է տպավորիչ Հորինվածքներ³⁶:

³⁵ Օ. Х. Халедян, ГРЕЖДСКОЕ ЗОДЧЕСТВО Армении, М., 1971, с. 229—339.

³⁶ Н. Г. Бундстон, Ю. С. Яраков, Архитектура Армении, М., 1950, с. 128.

АРХИТЕКТУРА МУГНИЙСКОГО МОНАСТЫРЯ

Комплекс Мугнийского монастыря расположен на окраине одноименного селения Антаракского района. Церковь монастыря — купольная базилика с 4-х апсидах — построена в 1664—1669 гг. архитекторами Саяком Хизаници и Муратом. С западной стороны расположена трехарочная открытая галерея, возведенная одновременно с церковью. В убранстве памятника применена полихромия — кладка стен выполнена разноцветными туфовыми камнями. Исключительно наряден портал южного входа церкви. В интерьере есть фрески XIX в. Прямоугольные крепостные сте-

ны монастыря с круглыми башнями построены из рваного базальта. Светские здания (жилые здания, трапезная, коммунальные постройки — все XVII в.) сгруппированы на северо-восточной стороне комплекса. От надстроенного в 1885 г. над жилыми комнатами шедьного здания осталась только каменная одномаршевая лестница. На территории комплекса находится также монастырский родник с резервуаром (XVII в.). Ансамбль Мугнийского монастыря является одним из лучших в армянской архитектуре позднего средневековья.

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶՐԻՆ

(Էջ 24—25)

Պարսկական երկարատև տիրապետությանից Արևելյան Հայաստանի ազատագրումը և Ռուսական կայսրության հետ միավորումը պատմական կարևոր իրադարձություն հանդիսացավ Այն իր քաղաքաբար ազդեցությունն ունեցավ հայ ժողովրդի հիշյալ հատվածի տնտեսական և հոգևոր կյանքի քաղաք ոլորտներում, այդ թվում՝ ճարտարապետության ու քաղաքաշինության:

Արևելյան Հայաստանի քաղաքներն (Նրևանը, Ալեքսանդրապոլը, հետագայում նաև Կարսը) ու քաղաքատիպ վայրերը (Նոր Բայազետը, Գորիսը, Էջմիածինը), որոնք անցյալում կառուցապատված էին առարկախորհուն և ունեին բարեկարգման ու կոմունալ տնտեսության չափազանց ցածր մակարդակ, XIX դարի ընթացքում քնակոխում են քաղաքաշինության զարգացման մի նոր փուլ և սկսում զանգվածորեն կերպարանափոխվել:

Որակական այդ փոփոխությունները հետևանք էին քաղաքաշինական ալև միջոցառումների, որոնք իրենց արտահայտությունն են գտել հիշված քաղաքների համար (քաղաքաշինամբ էջմիածնի) կողմից գլխավոր հասակագեծում և հետզհետե կիրառության ստացել: Արևելյան Հայաստանի քաղաքներում սկսվում են արժատավորվել Ռուսաստանում լայն տարածում ստացած և ժամանակի համար առաջադիմական քաղաքաշինական որոշ սկզբունքներ, այդ թվում կանոնավոր հասակագեծման սկզբունքը, որի հիման վրա կազմվել են Նրևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Նոր Բայազետի և Գորիսի գլխավոր հատակագծերը:

Հիշատակված քաղաքների և քաղաքատիպ բնակավայրերի օրինակով փորձենք պատմական այդ կարևոր ժամանակամիջոցում XIX դարի ընթացքում և XX դարի սկզբին հետևել նրանցում տեղի ունեցած քաղաքաշինական զարգացման պրոցեսին:

Նրևան: Իր քաղաքաշինական-ճարտարապետական նկարագրով տիպիկ արևելյան ու պարսկական

երկարատև տիրապետության զրոյժը կրող Նրևանը, որի մեջ մտնում էին Բերդը, Հին քաղաքը (Շահարը), Կոնդ և Գամիր-բուլաղ բնակիչ շրջանները, ինչպես նաև Հրազդանի կիրճի արևելյան թեք լանջին առաժնահանձն տեղադրված Ձորազուլը (որը առաջնորմ ինքնուրույն գյուղ էր և հետագայում է միացել Նրևանին), Ռուսական տիրապետության ժամանակաշրջանում սկսում է ընդարձակվել: Բաղաքին է միանում նաև Հյուսիսարևելյան, ամբողջապես ալեկապտ բարձունքների վրա տեղավորված Նորը (նախկին Չուվաքի գյուղը):

Քաղաքի այդ իրավիճակը արձանագրված է 1828 թ. անգլահայտնության հատակագծում¹, որի վրա քաղաքատարածության հարավային մասում տեղ են զբաղում Գամիր-բուլաղ Քաղաժառ (արևելքից) և Բերդը (արևմուտքից, Հրազդանի ձորերից), իսկ Հյուսիսային մասում՝ Շահարը կամ Արարատյան Հայկական Քաղը (արևելքից) և Կոնդն ու նրանից հարավ ընկած կենտրոնական շուկայական հրապարակը: Կոնդի և Շահարի միջև Սփաված էր խանի այգի կոչվող մի ընդարձակ տարածություն: Քաղաքի արևմտյան սահմանը կազմում էր Հրազդանի խոր կիրճը (որում Հյուսիսից հարավ ոլորապատյալ հոսում է գետը), Հյուսիսային՝ Քանաքեռի սարահարթը և արևելյան՝ Նորքի բարձունքները: Հարավային կողմից քաղաքատարածությունը շարունակվում է դեպի Արարատյան գաղաթ:

1828 թ. Քուրդմենչայում կնքված պայմանագրի համաձայն Պարսկաստանից Հայքին ներկաղթեցնելու և նրանց մի մասին Նրևանում բնակեցնելու կապակցությամբ իսկին այդի կոչված տարածության վրա սկսում է առաջանալ բնակիչի նոր թաղ: Սրա կառուցապատումը կատարվել է կանոնավոր սկզբունքով, 3—4 միմյանց զուգահեռ փողոցների միջոցով: Առաջին ուղիք փողոցներից

¹ О. Х. Халевича, Гражданское общество Армен, М., 1971, с. 30.

(այժմյան՝ Ամիրյան, Սվերդլովի, Սպանդարյան) և գրանց ուղղությամբ արգեն գոյություն ունեցող տները ցույց են տրված Երևանի բերդից վերադարձ, սակայն առաջը թաղաքաառարմատության ընդգրկող 1837 թ. հատակագծում², որը իրավունք է տալիս կարծելու, որ հատակագծումը կառուցված է վերահիշյալ թվականից առաջ: Հետևապես, պետք է ընդունել, որ Երևանի համար նորաշխուհի տեղից առաջ միջոցառումը փաստորեն սկսում է կիրառվել Պատկերի զորարանակի կողմից Երևանի բերդը գրավելուց (1827 թ. հոկտեմբերի 1-ին) ընդամենը տասը տարի անց:

Հետագա տարիներին հատակագծման այս սկզբունքն առավել զարգացում է ստանում և կիրառվում նաև Հին Երևանի կամ Շահարի (Արարատյան Հայկական թաղի) վերակառուցման մասնակի Այլ է վկայում Վովկաի փոխարարյի կողմից 1856 թ. գեներալների 23-ին հաստատված գլխավոր հատակագիծը, որով թաղարի ողջ հողատարածությունը, թաղառությունը Կոնգի և Նորքի, պետք է վերակառուցման ենթարկվեր կանոնավոր հատակագծման սկզբունքով, 1865 թ. մի փոքր բարելավված հատակագծի համաձայն, նույն թվականների պահպանմամբ որոշ լավագույն ափսոսանքով էր փոփոխել կանոնավոր ցանցով հողատարածությունը Գամիր-թույալ թաղամասում³: Ինչպես երևում է նշված հատակագծից, Գամիր-թույալի տարածության վրա, սկսած Տեր-Ղուկասովի (այժմ՝ Նայրանդյան) փողոցից, հարավարևմուտքից զեղի Հյուսիսարևելք ձգված փողոցների ուղղությամբ որոշ անկյան տակ բնկվում է զեղի արևելքը, համապատասխանաբար փոխելով ուղիղ անկյան տակ սրանց հատող փողոցների ուղղությունը: Այսպիսով, Երևանի Հին կառուցապատում ունեցող և համատարած այգիներով զբաղեցված համեմատաբար հարթ սկաքանա ընդգրկվում էր հասարակական տարածվող փողոցների կանոնավոր ցանցով՝ առաջացնելով տարբեր լավերի ու հիմնականում ուղղանկյուն բնակելի թաղամասերի միասնական համակարգ:

Երևանի թաղարի գլխավոր հատակագծի կենսագործմանը առավել զարկ է տրվում փաստորեն 1862 թ., երբ սկսվում է Կրկեսասեռայա (հետագայում՝ Առաքանի, այժմ՝ Արթուրյան) փողոցի բացումն ու կառուցապատումը: Հյուսիսարևելքից (պլանի զույգի) զեղի հարավարևմուտք ձգվող և մոտ մեկ կմ երկարության ունեցող այս փողոցն

ունենում է թաղարի կենտրոնական մասով, Հին թաղարի և Նոր թաղի տարածությունների զբաղվող ուղղահաս թաղանց թաղանց միմյանց զուգահեռ մի քանի փողոցներին:

XIX դարի երկրորդ կեսի ընթացքում փողոցների այս կանոնավոր ցանցը հետզհետե իրականացվում է, առաջացնելով Առաքանի փողոցին զուգահեռ փողոցների (այժմյան՝ Լենինի պողոտան, Տեր-Գաբրիելյան, Տերյան, Նայրանդյան և Ալավերդյան) համակարգը:

Երևանի բերդը, որ իր գոյության և թուրք-պարսկական պերագոտության մասնակալարյանում ուղղամտարական տեսակետից կարծար նշանակության ունեցող մի ամբողջություն էր, գրավելով սուսների կողմից, որոշ մասնակալ շարունակեց ծառայել նույն նպատակին: Թաղի կալազորից այսպիսի սեղանավորված էր նաև նահանգապետարանը: Այդ պատճառով գոյություն ունեցող շենքերը (խանի պալատը, հարձեք, զորանոցները, զինվարահասանքը և այլն) զինվորական իշխանությունների կողմից պաշտպանվում էին տարբեր նպատակներով: Դրան զույգընթաց այսուհի՝ սկսած 1845 թ., իրականացվեցին շինարարական որոշ աշխատանքներ (հարձեքի շենքը հարմարեցվեց զինվորական հիմնարանի, կառուցվեց զինվորական կենդանի և այլն): Հետագայում, երբ 1863 թ. նահանգապետարանը փոխադրվում է թաղարի կենտրոնում (Գյուլիստանյա, այժմյան՝ Ալավերդյան փողոցում) կառուցված Նոր շենքը, Երևանի բերդը կորցնելով ուղղամտարական և վարչական իր նշանակությունը, ապրիմանաբար լքվում է:

Թաղարի գործարար կենտրոնը շուկայի ընդարձակ հրապարակն էր (բերդի ու Կապույտ ձրգկիթի միջև)՝ իր զանազան, առևտրական և արհեստավարական շարքերով, իշխանատներով և այլ շենքերով: Երևանում կային նաև երկրորդական նշանակության ունեցող հրապարակներ՝ Զալա-թաղարը, Նոր հրապարակը (այժմյան՝ Ազիզբեկովի անվան, որը մեկուկուսուկուս XIX դարի 50—60-ական թվականներին):

Նույն մասնակալարյան թաղաքաշինական աշխատանքների արդյունք է Երևանի օձնվարական ալգին (այժմ՝ 25 կոմիտասների անվան) Այն ստեղծվել է Բերդից հյուսիսարևելք ձգվող հասնապատ տարածության վրա:

Բնակչության կոմունալ պաշտպանման էին ծառայում թաղերները, որոնց մի մասը (ինչպես նաև այլ բնույթի մի շարք շենքեր) կառուցված էին պարսկական պերագոտության շրջանում: Ջրի անբավարար մատակարարման հետևանքով թաղերից զուրկ էին Հիգիենիկ պայմաններից Կենցաղային նպատակների համար բնակչությունը

² ЦГБНЛ, коллекция военно-топографических карт, планов и схем, фонд 345, ош. 44, ед. хр. 1521.

³ В. М. Арутюнян, М. М. Асратян, А. А. Меликян, Ереван, М., 1968, стр. 6.

⁴ Նույն աղբյուր, նկ. 47:

Հիմնականում պատմում էր ջրերեղից և սակավաթիվ աղբյուրներից, որոնց թիվը 1851 թ. տվյալներով Հասնում էր 200-ի: Թեև 1857 թ. սկզբում էլ չրամատակարարման ցանցի ստեղծումը (Գն. դատից), սակայն խնկուռ ջրի Համար 1-ը ջրերեղի, Դ՛2 և 3 հոգարի ջրերը վարժեց չէին:

Առանձին Հետաքրքրություն է ներկայացնում նրանք XIX դարի առաջին կեսի մոզոգրպական բնակիչի աների հարտարապետությունը: Անկախ ռեական ու ներքին կազմակերպման տարրերություններից (որն Հնունց էր նրանց բնակիչների զտազմունքի, կենցաղային սովորությունների ու ազգային պատկանելության), քաղաքիվ են բնակարանները տեղական բնակչության և պայմաններին Համապատասխանեցնելու, ուղիներու Հատակազորման ու կառուցման ուղադրով օրինակները:

Նույն ժամանակաշրջանի մոնումենտալ ճարտարապետության աղբյուր է նրանքի ավելի Հին կենդանիների գեղարվեստական մակարդակով զինուր Խ. Մարգին կենդանիների Հրազդանի ճարտարին, Ջուրազուրի զինին, որը Հնի տեղում Հիմնովին վերականգնվեց 1835—1842 թթ.:

XIX դարի II կեսին և Հատկապես վերջին տասնամյակներին ավելի ակնառու են դառնում նրանքի Հիշատակված զինուր Հատակազորման ներդրումը քաղաքայինական մասնաշրջանների կիրառման աղբյուրները: Բարձունքներով շրջապատված քաղաքի կենտրոնական մասում Հիմնականում իրականացվում է փողոցների կանոնավոր ցանցով կազմավորված կառուցապատումը: Նաղարովակայա (Ամիրյան), Բնհրափովակայա (Սվեդզովի), Ցարական (Սպանդարյան), Թարխանովակայա (Պուշկինի և Կուսյանցի), Դեկտորական (Թունյան) և արանց ուղիղ անկան տակ Հատուկ Արմյանակայա (Լենինի պողոտա), Մալարական (Տերյան), Աստաֆինի (Արովյան), Տեր-Ղուկասովի (Նալբանդյան) և Դուրերնական (Ալավերդյան) փողոցներով ստեղծվում է անցյալում տարերայնորեն կառուցապատված նրանքի քաղաքայինական նոր Հենքը և ճարտարապետական զինանկարը:

XIX դարի վերջին նրանքի քաղաքայինական իրավիճակի մասին ընդհանուր դաղափար կազմելու տեսանկյունից արժեքավոր փաստաթուղթ է Դ. Ալիյանի «Ալյարատա-ում Հրապարակված Հատակագիծը», նրանքի պարզ են դառնում տվյալ

ժամանակաշրջանում նրանքի Հատակագծային մասնաշրջանների իրականացման լավն ու սահմանները, քաղաքի քաղաքացուցիչ մասերի տեղաբաշխումն ու փոխադարձ կապը: Համառոտ այդ փաստաթղթի, փողոցների կանոնավոր ցանցով ընդգրկված էր Տաճարի զղայի տարածությունը՝ սովորված այժմյան Սաղաթ-Նովայի և Մարգին, մյուս կողմից՝ Լենինի պողոտայի և Նալբանդյան փողոցի միջև: Փողոցների կանոնավոր ցանցով ընդգրկված էր նաև «Անկյակական աղբյուրի միջև» Ամիրյան փողոց և քաղաքային քաղաքային (Լենինի և Տաճարյան) Հրապարակների միջև) մինչև 26 կոմսարների փողոցն ընկած տարածությունը: Փողոցի մեացած մասերը՝ Կուզը, Ջուրազուրը, Բերդի Քաղը և Նորը Հատակագծում ընդգրկված չէին: Այսպես պատահում էր վերականգնվել:

Կապիտալիզմի զարգացման փուլը թևակոխած քաղաքում (որ 1897 թ. ուներ ավելի քան 29 հազար բնակիչ), սկսում են տառաջալար աղբյուրներական մի քանի սակավազոր ձեռնարկություններ (կաշկերդարան, միսանիական արհեստանոց և այլն), 1902 թ. կրկնվողը Հաղցում է նրան, 1907 թ. Հրազդանի կիճում դարձարվում են երկու փոքր Հիդրոէկտրակայաններ: Փաղաքի զարգացմանը Համընթաց աճում և ընդարձակվում է կոմունալ տնտեսությունը: 1898-1903 թթ. վերջսին քաղաքավորվում է «Անկյակական աղբյուր», 1911 թ. ավարտվում է չրամատակարարման զին կառուցումը՝ ի Հալիվ «Կոնստանդինա աղբյուրների» 1913 թ. ստեղծվում է ոչ մեծ Հեռախոսային ցանց և կազմակերպվում փողոցների մի մասի էլեկտրական լուսավորումը: Կառուցվում են նոր քաղաքների, Հյուրանոցների, կուլտուր-լուսավորական շենքեր՝ Բասրենի, կինոթատրոնի, զինանկարչի, ուսուցչական սեմինարիայի, ինչպես նաև առաջադասական, վարչական և այլ բնույթի, որոնք որակական փոփոխություններ են մտցնում քաղաքի կենտրոնական մասի ճարտարապետության մեջ: Ռուսական և եվրոպական քաղաքների աղբյուրվյալը կառուցված շենքերի միջոցով նրանում արմատավորվում է կյանքի զին ուղը, որն այստեղ ինքնատիպ արտահայտություն է ստանում ավանդական տուրք քարի (զերաղանցապես ու նրանի) կիրառության շնորհիվ: Այդ կարգի կառույցներից են Խաճանկապատարանի (1864), քաղաքապետարանի, ուսուցչական սեմինարիայի (1898—1900, Հեղ. Բ. Մհերչյան), Գետական զանապարհի, քաղաքային ակումբի, Դանփուլա-

1 Ք. Հովհան, նրանքի պատմությունը (1801—1879), նրան 1919, էջ 470—471:

2 Ո. Մարգինյան, նրանքի Խ. Մարգին կենդանի, Էմբոյին, 1874, ԺԲ, էջ 22—27:

3 Ալիյան, Ալյարատ, Վենսիկ, 1890, էջ 210—211:

4 Տե՛ս Ք. Հովհան, նրանքի պատմություն, Հատ. 2 (1879—1917), նրան, 1913, էջ 262—263:

գլխների թաղանթի (1907, Հեղ. Բ. Արագյան),
 «Աղբյուր» կենթաթաղանթի, «Որհան»-ի «Գրանդ
 Հաթի» հրատարակչների, արախան գիմնազիայի
 (1911-1915, Հեղ. Վ. Միմանյան) և այլ շնչերի
 նախ ժամանակաշրջանին են վերաբերում ու լուս-
 տաբերիչ (1885-1900) և աստական նիկոլայան
 (1901) կենդանիները:

Թաղանթանային հարադարձակությունը եւ
 որակական փոփոխություններն էլ կրում, ի հայտ
 բերելով երկու Հիմնական անկեղծ ուրեք թաղանթի
 ժամանակաշրջաններին (Տեղ-Ավերդյաններն, Խորա-
 սանյաններն, Աֆրիկյաններն, Հովհաննիսյաններն և
 այլք) պատկանող մեծամասնությամբ կառուցված
 հարադարձակության ուղով են կառուցված, ապա
 թաղանթի աշխատավոր խաղերին պատկանող բնա-
 կերի աներում ավելի կենսական են մնում ծագ-
 վորդական ավանդական ձևերն ու լուծումները,
 բնի այսանց և նկատվում է որակների ձգտում
 հարստացնելու բնակչի տան կազմի ու գեղար-
 տական միջոցները, բնակչի տանը բարձրացնելու
 եւ՝ քաղաքային մակարդակի Դրանց թվին
 պետք է դասել Զանգերիկյանների, Բաղաշանյան-
 ների, Խաղաբաշանյանների, ինչպես նաև Ապա-
 զարյան և Ավերդյանի փողոցներում, Կեղեցում և
 Խորում գտնվող մի շարք բնակչի տներ:

Նրանից զգալի զարգացումը պատկանում
 քաղաքի վերակառման եւս զգալիոր հաստի-
 գիծը: Դրա նախադրատարածման կարևոր միջո-
 ցառումը հանդիսացավ թաղանթի մանրամասն ան-
 զանառային կառուցումը, որպիսին 1906—
 —1911 թթ. ընթացքում իրականացրեց անիերի
 Բ. Մեհրաբյանը: Եւրո 1900 հա թաղանթադար-
 ժառվան ընդգրկող այս անգամանակին առավել
 մեծամասնությամբ ու եղբորան է մինչև այդ կառու-
 րանների համեմատությամբ ու թաղանթան հան-
 զամանություն է առաջին նախատեսվածական նրանի
 թաղանթաներին պատկերը: Ինչպես դժգոհ չէ
 կառնել այդ փաստաթղթին, Ղ. Ալիշանի հրատա-
 րական հաստիագին համեմատությամբ խիստ
 փոփոխություններ չկան: Նրանիսկան ուղղու-
 թյան փողոցների թվում երկարից է Դարեմեհյան
 (Ավերդյան) փողոցը, իսկ Կեղեցիայան (Մար-
 ցի) փողոցը շարունակվելով գեղի հարավ մինչև
 երկաթուղային կայարանը:

Այսպիսին է ընդհանուր պատկերն այն թաղա-
 քայինական վերափոխումների, որոնց նկատի-
 վից նրանք՝ գտնվելով աստական կայարանյան
 նախադրական կենտրոններից մեկը: Ըստ արժան-
 վանի գնահատելով դրանք, պետք է, ասելու,

նրանք, որ համեմատում Անդրկովկասի մյուս կա-
 րևոր կենտրոնների՝ Բիֆլիսի և Բաքիի հետ, նրե-
 վանք թաղանթայինական տեսանկյանց թերազարտ
 էր և այդ ժամանակաշրջանում էլ հասավ իր զարգա-
 ժան հարադար կարևոր փուլին՝ ավելանական ժամա-
 նակաշրջանին:

Այնուամենայնիվ: Էին ամբողջի մաս ընկած և
 Դյուսիքի տները կարգ այս փոքրիկ բնակավայրը,
 գտնվելով աստական տիրապետության տան ան-
 ջած նրեկյան Հայաստանի երկրորդ կարևոր քա-
 ղաքը, աստիճանաբար թաղանթայինական նախ
 կարգի փոփոխությունների է ենթարկվում: Նրա
 զարգացման ազդակներինց առաջինը 1828—1830
 թթ. ընթացքում Երզրանից և Կարսից շուրջ 2500
 բնակիչների ներգաղթն էր այստեղ¹⁰, Դրա հետ
 միասին Անդրանդադուլի բնակչության անին մե-
 ժապետ նպաստեց աստական մշտական կայազորի
 առկայությունը թաղանթին կից բերգում:

Անդրանդադուլի բերգը կառուցվել է Արևել-
 յան Հայաստանի Ոստանաաներին միանալու առա-
 չին տարիներին, որպես կայարանյան հարավային
 սահմանի վրա սաղմավարական հզոր հենակետե-
 րից մեկը: Այն անգամայն էլ հին Դյուսիքի և Ա-
 խալայան գետի միջև ընկած և չըջողաբար նկատ-
 ամար ինչպիսի գիծը անկեղծ բարձունքի վրա: Բազ-
 կացած էր միջքի և զենքի շանմարաններից, տե-
 անական ու կամուխ կառուցվածքներից, զորա-
 նցներից (որոնք կարող էին անգամայն մինչև 16
 հազարի համեմատ զորք, բնի մշտական կայազորի
 թվը 6—5 հազարից չէր անցնում)¹¹: Բերգի երկու
 կողմերում անգամայն են չըջանան հաստիագը-
 ժով ամրոցներ (կառուցված են ու կարծիք առ-
 ֆաբրիկից, սրի պատնեռով դրանցից մեկը կա-
 ղված է սե, մյուսը՝ կարմիր գույն: Դրանից ար-
 խիվներում պահպանված թաղանթի հաստիագը-
 մներից, Անդրանդադուլի բերգը թաղանթանալով
 բուրգ և ընդարձակ սաղմավարական համայն էր¹²:

Թաղանթի ազդարանկայության անին երբոր
 զորեներ նրա անտարաբնակավարական նշանա-
 կայության աննախնիաց բարձրացումն է XIX-րդ
 դարում: Իր որմնադրերնրով, քարաշա վարդա-
 ներով, առաջագործներով, պղնձագործներով,
 անգամայններից հայտնի թաղանթում շուրջ 2600
 արհեստագործներ, XIX դարի կեսին միավորվում են
 համաքարական 28 կազմակերպությունների մեջ¹³:

Անա վերափոխյալ զորեներից շնորհիվ է, որ
 մինչև XIX դարը 70 բնակներից թաղանթան Դյուսի-

10 Գ. Կազմյան, Անիական, Երևան, 1927, էջ 12:

11 Գ. Անիյան, Շիրակ, Կենտրոն, 1881, էջ 124:

12 ԱՄՈՒՄԱ, ֆոն 340, օտ III, 62, ք. 1073 (I—II)

13 Գ. Կազմյան, նմ. աշխ., էջ 16:

Պ. Մեհրաբյանի աշխատեց Ա. Բաժանյանի համար
 Վիճ խաղի 1923 թ. նրանի հաստիագին կազմելու:

րի անհշատ քնակավայրը դառնալով քաղաք, 1865 թ.ունիսի 17, իսկ մի տասնամյակ անց՝ 25 հազար բնակիչ¹⁴։

Հնագուհի անող Ալեքսանդրապոլի կորիզը հանդիսացավ շենքերգիւն և ՎՄԽունց ձորերի ու քարհանքերի միջև ձորաքիթին տեղավորված Հին Գյումրին՝ պատմական Կումանդին Մրա հարավ և հարավ-արևելյան մասում է, որ սկզբում տարերայնորեն, առանց քաղաքայինական որոշ ծրագրի, աստիճանաբար կառուցապատվում են Ալեքսանդրապոլի նոր թաղամասերը, որոնցում բնակչությունը տեղաբաշխվում է ըստ սկզբային պատկանելության (ԵՊԱՐԳԻ մաշլա, ԵՐԵՅԻ մաշլա, ԵՆՈՒՍՈՒՆԵՅԻ մաշլա, ԵՄՈՒՍԱԿԱՆ Թաղամաս կամ Սլաքոզկան), ըստ զավանսների (ԵՎԱՅԻՆԻՆԵՐԻ Թաղամաս կամ ԵՃԻՐՆԳՆԵՐԻ մաշլա) կամ ըստ գրառմանքի (ԵՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ մաշլա, ԽԱՐԻՐԻ արհեստների անունը կրող փողոցներ և այլն)։

Եթե Ռուսաստանի Հնա միացման սկզբնական շրջանում, նկատի տանելով քաղաքի և ամրոցի ռազմավարական տեսակետից կարևոր նշանակությունը, ամրոցն էր հզատաքության Հիմնական ասարկան, որի հզորացման ուղղությամբ, սկսած 1834 թ.¹⁵ մեն շանքեր էին զործարկում զինուորական իշխանությունների կողմից, սակայն երբ տարի անց, 1837 թ., երբ Գյումրին վերանվանվում է Ալեքսանդրապոլ¹⁶, քաղաքացիական իշխանությունների ուղղությամբ կենտրոնանում է քաղաքի վերակառուցման հարցերի վրա։

Մնչուեւ ցույց է առաջ փաղափրակ քաղաքայինական փառաբանքներից մեկը՝ 1837 թ. հունվարի 15-ով թվագրված գլխավոր հատակագիծը¹⁷, նոր քաղաքը, ինչպես նրանք, կառուցապատվում է կանոնավոր հատակագծման սկզբունքով՝ մի աղան և համարյա հարթ տարածության վրա, որն ընկած էր Հին Գյումրիից դեպի արևելք։ Որոշ շենքերից հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք ձգված ուղղաձիգ փողոցների ցանցով քաղաքատարածությունը բաժանվում էր մեն (100×150 մ) և փոքր (50×75 մ) թաղամասերի։

Հարկ է նշել, որ տեղանքի անհարթության պատճառով կանոնավոր հատակագծման սկզբունք-

ը կիրառությունն լիովին արգարացված է։ Եթե հյուսիսից հարավ ձգված փողոցներն ունեն քնական թեքություն, ապա արևելք-արևմուտք ձգված փողոցները ստացվել են ելնելներով և այդ պատճառով պակաս նպաստավոր են արանադրույի համար։

Մնա՞յում այդ հանգամանքին, Ալեքսանդրապոլի կառուցապատման առաջին հատակագիծով արժատավորված սկզբունքը պահպանվում է 1865 թ. և հաջորդ հատակագիծերում¹⁸ ու աստիճանաբար իրականացվում։

Հասարակական կենտրոնը շուկայի հրապարակն էր (այժմ՝ Մայիսյան ապստամբության), որի շուրջը և նրանից սկզբնավորվող փողոցներում կային բազմաթիվ խանութներ և արհեստանոցներ, ինչպես նաև վարչական և կոմունալ շենքեր, եկեղեցիներ։

Արգին վաճառաչա՞ր դարձած քաղաքում օտար վաճառականներին ու ալքոններին ապաստարկելու համար կային տասի լավ պանդոկներ և կարավանատներ։ Դրանցից Հինաստեղծում են ԵՃԹ Կալեպրանց, ԵՄՈՒՍԻՆԿԱՆՆԵՐԻ, ԵՄՈՒՍԱԿԱՆՆԵՐԻ, ԵՄԱՅԻՆԻՆԵՐԻ և այլն։ Եղաների մեջ զերբինն ամենանշանավորն էր։ 1865—1867 թթ. կառուցված այս երկհարկանի շենքի առաջին հարկում տեղավորված էին խանութներ, իսկ երկրորդ հարկում՝ հյուրանոցը։

Թնակչության կոմունալ սպասարկման կարիքներին էին ծառայում քաղաքի տարբեր թաղամասերում, գլխավորապես ԵՊԱՐԳԻ-ՎԱՅԻ մեժուտառ-լաչ գնատների շրջակայքում տեղադրված իսկոնիքները, որոնցում օգտագործված ջրերը, կոյուղու քաղակալության հետևանքով, լցվում էին հեշտալ գնատակները։

Ջրամատակարարումը կատարվում էր քահրեղային համակարգերից, որոնք գտնվում էին քաղաքի հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան մասերում։ Թրծված կավի խողովակաշարով իրականացված ջրատար գծով ջուրը ԵՄՈՒՍՈՒՆԱՅԻՆ ուղղությամբ քաղաք էր բերվում ու բաշխվում թաղամասերի միջև՝ հիմնականում աղբյուրների միջոցով։ Դրանցից շատերը (ԵՄԻՐՈՂԱՆԵՅԵ, ԵՆՈՒՍԱ ՄՈՒԿԱՅԻՆ, ԵՐՈՒ ԱՄՈՒՆԻ և այլն) իրենց վրա կրում են գյումրից արքայադնեն հնուա վարդանների հարուստ մեղերի գրոշը և ինքնագործ, մոզվեղդական հարստարարությունից ուղղաբաշխված են։

¹⁴ Ղ. Աֆրեմ, Երթիկ, էջ 154։

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ Վերանվանումը կատարվում է 1837 թ. հոկտեմբերի 2-ին, նկատելով Առաջին Գյումրի ալքոնի կառուցվածքը՝ ի պատիվ Ալեքսանդրա Ֆրոբորովնա թաղու (ռմ՝ Ղ. Աֆրեմ, Երթիկ, էջ 154, Կ. Նազեյան, Երթ. աղբ., էջ 12)։

¹⁷ ЦГБИА, фонд 349, оп. III, ед. хр. 922, «План города Гумроа вновь преобразованному (за отсутствием гумриной инженерной команды) ասարադելի է պրադրը՝ Գմայլը»։

¹⁸ ЦГБИА, фонд 349, оп. III, ед. хр. 1013 (I, II), фонд 349, оп. III, ед. хр. 1072 (I—II)։

XIX դարում կառուցվում են հեղեղափան շենքերից հիշատակության արժանի է Ամենափրկիչը եկեղեցին և Նավատաղյալ Համայնքի միջոցներով շուկայի հրապարակին մաս 1853—1873 թթ. ընթացքում կառուցվում այս եկեղեցին իր գեղանկար մալուցարանական նկերով Հարսապետում էլ հրապարակի Համայնապետները նրա կառուցող վարդապետներ՝ քարաշ-արմաղիք Գուրիկ և Բազիս Կարապետյանները և հյուսիս Արցախի Մանուկը բանալի են այս եկեղեցում վերադարձրել Անիի Մայր տաճարի նկերը՝ Մեկ ութը եկեղեցի 1843—1855 թթ. շուկայական հրապարակի Հարավարևելյան կողմում կառուցում են էրզրումից գաղթած կաթոլիկ հայեր՝ Կառնիկոս Աղեքսանդր վարդապետի նախաձեռնությամբ:

Հարցը դարձ սկզբին քաղաքի զարմացալիս՝ «Ամենափրկիչ և Վաչագի պատա Քաղամասերում Համադատախանարար 1901 և 1902 թթ. կառուցվում են մեկական զինվորական առաստե եկեղեցիներ:

Անբյուրանգրադյում քաղաքաշինական աշխատանքներն ավելի լայնահուն են դառնում XIX դարի երկրորդ կեսին կառուցադատման հիմքում ընկած էր 1868 թ. կազմված ու կովկասյան փոխարքայի կողմից 1872 թ. սեպտեմբերի 9-ին հաստատված զեյմադը հաստիքները, որը պահպանելով հանգիստների հաստիքները (1877, 1881, 1885) վանկուրայ սկզբունքը, որը շտաբը ընդարձակում էր կառուցադատման նիստիս հողատարածությանը, ավելացնում միմյանց զուգահեռ և սղզահայաց փողոցների ցանցը:

Առանձնապես ինտենսիվ են կառուցադատվում զինարանի փողոցները, կապես նպատակով այս մասը հարաարադական գեմերի կազմավորմանը: Այգլիների գերով են բնորոշ արձանադից արևելք ձգված Անբյուրանգրադյալա (Արաբյան), Կարակալա (Ավրադովի), Գնեքալակալա (Շահումյանի), Երևանյան ու արևոց ուղղահայաց՝ Գուլիկի, Լորիս-Մելիքովի, Քհրոմովի (Մարտի մարտի), Քիլիկյան (Ռոստովկու), Պրուլինիակալա (Վահան Տերյանի) և այլ փողոցները (որոնք հիմնականում տարբերվում էին իրենց համարակալաներով) Գրանց հնադրական քարեկարգվում են, լուսավորվում զաղապետներով:

Քաղաքի ընդարձակման մյուս գործոնը զորամասերն էին: XIX դարի սկզբին առաջանում են զորանշալիս երեք Քաղամասեր՝ Վաչագի պատա (հարավից), «Ամենափրկիչ» և «Գուլիկները» (հյուսիսից), որոնցում տեղադրված շենքերը միասին են՝ կառուցված զինադատանալա ու նրանցի տեղական տաճ քարով:

1873 թ. հարց անընկերից առաջանում զրեկեցից հետո, որը մեծ վնասներ է հասցնում քաղաքին, «Մուրադալա» քաղաքի կենտրոնական մասով հասց հատվան առնվում է գնառալու մեջ, նպատակով այս մասի ասեղադարական վիճակի բարելավմանը 1878 թ. քաղաքային գերեզմանոցը փոխադրվում է հարավային ծայրամաս, Ազատված քարեուհին ասեղադարալա նպատակով է և վերանվում գրառանդի (այժմ՝ Մարտի մարտի տեղին գրառալից): Բարեկերի հարավային վերադարձության վրա գնառ 1872 թ. հիմնադրված «Եղիմ լեռնի» (պատվա բուր) զինվորական պանթեոնում կառուցվում է «Գուլիկ» մասը՝ կառույց առաջին մասալու: Կանալ տարածության մի այլ շենք է առնվում կալարանները մասում:

Անբյուրանգրադյում ես տարածում է առանում կառույցի մեջ, զեյմադարալա վարդական և հասարակական շենքերում: Այգլիների հարաարադանությանը բնորոշ շենքերից են ասեղադական տառնալարի (1907 թ., հեղ. ինժ. կապիտան Միլանով), Նրիկյան իգական զինադարի (1912 թ., հեղ. ինժ. գնեքալ էլլարով) և այլ շենքեր: Նույն հասկանիշներով բնորոշ են Կասանգովների (1890), Ֆիթղզյան և Վալիսեկի քաղեքները հարաարադանությանը:

Անբյուրանգրադյում բնակելի տների հարաարադանության մեջ նկատում ենք նույն երևույթները, ինչպես նշեցինք երևանի համար նրան բնակչության մեծամասնությանը պատկանող բնակելի տներում պահպանվում էին և զարգացվում մաղդրգական հարաարադանության այս քաղաքի համար տույն ավանդույթները, ապա մեծահարուստների մեծահարուստ՝ Մուրադ ավադ (1870), Ֆիթղզյան (1872), Տուրալյանների (1879), Աբադ Գալյան (1879), Տեր-Պողոսյանների և Գրեգորյանների (1882), Վանեյանների (1886) և այլոց, տարբեր շտեկերով նկատելի է քաղաքալից բնակելի տան ներքին կալում և արտաքին հարաարադանության առնվելու նպատակը:

Ուսական զորքերի կողմից երրորդ անգամ (1877 թ. նոյեմբերի 6-ին) զաղվելուց հետո և արևմտահեռ ավելի քան 40 տարի (1877—1919) Ռուսաստանի կազմում գտնվելու ընթացքում Կարսը այդ ընկած արալ զարգացմամբ ու մեղք բերելու ուղղավարական կարևոր նկատման, հասանգական վարդական կենտրոնի ու վանառալալ քաղաքի նշանակությանը: Գրան զգալիորեն նպատակ:

18 С. Г. Матвеев, Народно-архитектурная жизнь в городе Ленгевана XVIII—XIX вв. (авторское), Ереван, 1972.

տեղին Ալեքսանդրապոլ-Կարս (1829) և Կարս-Մարիլամիշ (1816) երկաթգծերի գործարկումը: Համապատասխանաբար անց քաղաքի բնակչությունը, որը, չհաշված կայազորը, կազմում էր 35 հազար²⁰:

Քաղաքի զարգացումը հիմնականում տեղի ունեցավ միջնադարյան կորիզի (պարիսպներով շրջապատված միջնաբերդի, բուն քաղաքի կամ բերդի, որը մինչև XIX դարի վերջը նույնպես շրջապատված էր պարիսպներով) սահմաններից դուրս գտնվող կենտրոնական՝ Օրթա-կապու, Բալ-բամ-փաշա, Մու-կապու և Քիմուր-փաշա արվարձաններում²¹:

Օրթա-կապու արվարձանը, որ, ամենայն հավանականությամբ, ամենահինն էր ու ամենամեծը, իր շահերով մոտավորապես հավասար էր հին Կարսին: Այն տարածվում էր մի ընդարձակ հարթավայրի վրա, որն ընկած է հին Կարսի հարավ-կողմում: Բալբամ-փաշա արվարձանն առաջացել էր միջնադարյան Կարսի քաղաքապարիսպների հարավարևելյան անկյան համանուն զարդասի մաս, ձգվելով Ալեքսանդրապոլ տանող ճանապարհի ուղղությամբ՝ նրանից դեպի Հյուսիս: Հայերով բնակեցված Մու-կապու ոչ մեծ արվարձանը գտնվում էր Կարս բերդի հարավարևմտյան փոքրիկ, համանուն զարդասից դուրս, Կարուց-գետի աջ ափին ընկած ևնդ տարածություն վրա: Քիմուր-փաշա կոչված արվարձանն ընկած էր Կարուց գետի ձախ ափին, Նուրն անունը կրող խելիկին ամրոցից յոթ անգամ:

Քարաշեն, միառակսև և փայտաշեն մի քանի կամուրջների միջոցով Քիմուր-փաշա արվարձանը կապվում էր Կարսի կենտրոնի և արվարձանների հետ:

Հիշատակված արվարձաններից կարևորագույն Օրթա-կապուն էր: Այդ է պատճառը, որ առաջին տիրապետության տակ գտնվելու տարիներին քաղաքաշինական աշխատանքները ըստ 1880 թ. գլխավոր հատակագծի²² իրականացվեցին հիմնականում այստեղ: Կանոնավոր հատակաշինման սկզբունքով կառուցվեցին իրար զուգահեռ՝ Լորիս-Մելիքովսկայա, Ալեքսանդրովսկայա, Միխայլովսկայա և Գուրերեանոսովսկայա փողոցները, որոնք ձգվում էին արևելքից արևմուտք ու հասնում Կարուց գետի առափնյա՝ Նաբերեմայա կոչված փողոցը, ուղիղ անկյան տակ հատվում էին Հյուսիսից հարավ ձգված Մապյրենայա, Ռեմենե-

նայա, Կարադաղսկայա, Պոլիցեյսկայա և Նաբերեմայա փողոցներով:

Տարբեր էր հիշյալ փողոցների ելանակությունը կենտրոնական արվարձանում, որը փաստորեն նոր Կարսն էր: Առավել բանակ և զործարար կանգնել ալի ընկնողները Լորիս-Մելիքովսկայա և Ալեքսանդրովսկայա փողոցներն էին, որոնցից առաջինն ամրադիպեց, իսկ երկրորդը կիսով չափ զբաղեցված էին վաճառատներով ու խանութներով:

Գուրերեանոսովսկայա փողոցում էին գտնվում սպայի սուռը (офицерское собрание), Խահանգապետարանը, արհեստագործական զորքոցը, առևտրական դրամատունը և այլն: Նոր Կարսն ուներ նաև երկրորդական կարգի մի շարք արհեստագործական փողոցներ (Պուլսենյայա, Արսենյանայա, Լիսենյայա) և երբանցքներ (Ջուլուսոյ, Սերբերյանանի, Ժելեզնիկի):

Կարսի մեացած արվարձանները կառուցապատված էին տարբարանքներ, առանց քաղաքաշինական կարգ ու կանոնի: Քաղաքն ուներ եռփա կոչվող մեծ շուկա, որը տեղավորված էր նոր Կարսի հյուսիսային մասում, երկաթուղային կայարանից ոչ հեռու: Մա մի ընդարձակ հրապարակ էր՝ պարագծով շրջապատված խանութներով և արհեստանոցներով: Այստեղ էին կենտրոնացված հացահատիկի, ալյուրի և ուտեստների վաճառքը և տարբեր մասնագիտության արհեստանոցները: Նոր Կարսի հյուսիս-արևելյան կողմում էին գտնվում երկաթուղային կայարանը և կայարանամերձ հրապարակը:

Քաղաքն ուներ զրոսաչգի, որը գտնվում էր Միխայլովսկայա փողոցի վերջում, Նաբերեմայա փողոցի մաս: Կանոնալ ապաստարկման շենքերից էին Կարմիր, Մազլումի և Զանաուդյա կոչվող քաղերները, որոնց տեղաբաշխված էին հիմնականում Կարուսոյ գետի մաս (երկուսը գտնվում էին Մու-կապու թաղում²³):

Կարսի հայկական եկեղեցիները շորսն էին: Գրանցից ամենահինը Առաքելոց եկեղեցին էր՝ կառուցված Վանանդի թագավորության հիմնադիր Արաու Բազադուսունու որդի (929—953): Իր հատակագծային և ծավալաառարանական հորինվածքով առ կրկնում է Մաստարայի եկեղեցու (VII դար) տիպը: Ռուսական տիրապետության տարիներին այն վերածվեց զինվորական եկեղեցու: Այդ առթիվ են կատարվել կցումները (խորամուտքի մեկում), ներսի սվաղը և գմբեթի տակի մակագրությունները:

²⁰ Ցեղված էալ կոմպլեկտներն պատկանող եկեղեցին, որը գտնվում էր Կարուց գետի ձախ ափին ընկած Ցուխո մաշայում:

²⁰ Քաղի մասերի աշխարհիկ, սպովի մեջ տարեց կողմից: Զ. Ն. Լուկոյանի հարեան առեկվորները:

²¹ X. B. Դաւլ. Армения, т. 1, с. 501—520.

²² ЦВНГА, ф. 349, он. 17, ед. хр. 1041.

Կարսում կային նաև թաղային երկու եկեղեցիներ (ժամանակն և Բալթամ-փաշա մահմեդներին)։ Մի նոր եկեղեցի էլ հաստատվեց (սնտմբ ունի ունեցավ 1915 թ.) նոր Կարս կամ Յրթա-Կապու արվարձանի կենտրոնում։ Թաղաբի Նուրի և Բուս քանդակներն ունեին թանկեղեցիներ, գրանցից երկրորդը հաստատված էր 1908 թ. և գտնվում էր Միխայիլովսկայա փողոցում։ Բուլբուրի ունի մի քանի մզկիթներ, որոնցից երկուսը գտնվում էին Հին քաղաքի սահմաններում։

Ռուսական տիրապետության ժամանակ Կարսում զգալի չափով բնագործակում էր զարդաշահան քանդակ։ Ռուսական հաստատություններից Հիշատակին են իրական դիմեցողներ, Մարինադայա պողոտաներում, սեպուկան պողոտե (1905), քաղաքային լազարայա պողոտե, Նուր Խաթունի պողոտե (որտեղ մեծ մասն ունեին այդ նպատակով հաստատված շենքեր)՝, ինչպես նաև Բուսական ծր-խական պողոտե՝ Մուսթերայ եկեղեցու քանդակ (շենքը կառուցվել է Հին քաղաքի պարսերի մի քանի քարեթվի)։ Առաջին եկեղեցուց ոչ Հնուս կառուցվեց նաև մի զանգակատուն՝ նման Հաղպատի վանքի զանգակատանը։

Կարսի մշակութային աշխեններից Հիշատակին են պիլյոսիտե և ԵՏԻժումֆու կինոթատրոնները (երկուսն էլ Անգլոսոսիալական փողոցում), Խաժառանգին կինոթատրոնը (քաղաքային գրասենյակում), Բալթամյանների ակումբը և այլն։

Ի նշանակություն քաղաքի նուակի գրադման Հնրատրոնների, 1910 թ. Կարսում բացվեց մի Խալարան, որի նախատալին պատը գրվադում էր Մեծ իշխան Միխայիլ Անգլոսոսիալային, իսկ մյուս պատերը՝ Խաժառանգին քանակի գրադարների՝ Պապինյի, Լորիս-Մելիքյանի և Լազարեի պղնձա-կու քարանգրանգակներով։

Կարսի անտառի բերքը (Քառած քարեր և արևելքից արևմուտք ձգված մայրաքանդակներ վրա), որ Քուրբերը պլանիցեղ էին նախքան Խաժառանգին գրադումը՝ եկառի ունենալով դրա Խալարան քանակի նշանակությունը, վերադառն կառուցվում է Խալարանի Խալարանի նոր սկզբունքներին և Հնախոր գեղերի պահանջներին համապատասխան Հիմնովին վերակառուցվում են նաև Կարս բերքը նախապարհների ուղղությամբ և քաղաքի եկամուտը իշխող գիրք ունեցող քարանդակներին տեղադրված Խալարանիները (Քարերը)։

Այսպիսով, Խաժառանգին տիրապետության սակ գտնվելու շենքաներ չորս Խաժառանգինների բն-Բացքում Կարսը քաղաքայինական զգալի գարգա-

ցում ապրեց և Խալարանախալից 1919 թ. այն նորից տեղավ Քուրբական տիրապետության տակ։

Նոր Բալթամ։ Որպես բնակավայր կազմակերպվում է Հին Բալթամ (Քալթամ) գյուղի տեղում՝ 1829 թ. աշտակ գաղթած Բալթամյանների կողմից վերանվանվում է նոր Բալթամ (այժմ՝ Կարս)։ Բանվում է Մեհան լեռ Հարադարանայան ափին, նորագույն Քարանդակայ մաս և կմ գեղի արևմուտք գտնված և Հյուսիսային քանդակների լավ պահպանված զոլադարանայան մեջ։ Բնակավայրի հաշտա-րանայան մեջ արևելքից արևմուտք և եղանա-լով արևմտյան կողմում առաջանում է Խալարան-ների կողմից ԵՏԻժի գյուղի կողմով մի Խալարանի հիմնական, որը լայնահարված արևելյան կողմում ձգվում է մաս և կմ երկարությամբ։ Հիմնականի արևմտյան վերջավորության վրա գտնվելու է եղել Մեհան լեռ ափերին հիմնադրված Խալարանական Խալարաններից մեկը։

Խալարանի Խալարանայանով արտադրին և եղ-րին մասերի բանակում Խալարան ունի մաս 400 մ երկարության և 111 մ (միջին մասում) լայնա-րան, իսկ չորսուկ գաղադարաններից 40—50 մ բարձրության և իր մայրապատ լայնեղով Խալարան-վում է գեղի Հյուսիս, Հարսի և արևմուտքը։

Համանուն գեղանի ոչ խոր նորով Խալարանի կողմից Հասում է գեղի արևելք, ապա լեղվելով Հյուսիս՝ Քալթամ Մեհան լեռը։

Բնակատեղան մասնապատման մի աշխարհի Խալարանայան վրա՝ ԵՏԻժի գեղին չորսը (Խաժառանգին արևելյան կողմից)՝ Խալարանայան Խալարանի նոր Բալթամի կառուցապատումը։

Նոր Բալթամում քաղաքայինական աշխատանքները իրականացվել են նրանի նախնական վարչության կողմից հաստատված հաս-կապի համաձայնությամբ։

Դրանում փաղաների կանոնավոր ցանցով Խալարանայան ուղղանկյան թաղամասերը, ինչպես նաև Խաժառանգին մեհանների շենքերու համար հատկացվող հաղամասերը համարակալված էին նոր Բալթամում կազմավորվում են չորս հիմ-նական թաղեր՝ Բալթամ, Կարս, Խալարան և Մալիզի։ Վերջին հիմնականում կառուցապատվել է 1825—

22 Մասը Սեպուրան, Զիլայի Սեպուրանի իմպարադ գաղթ, որ այժմ նոր Բալթամ գաղթ, Կալարանայան, 1825, էջ 217—228, Գ. Զ. Սեպուրան, Մեհան Խալարանի կալարան Խալարան, Երևան, 1905, էջ 15—20.

23 Այդ մասին վերադառնալով և ավելի ուշ մանրակալարանի մի Խալարանի, որ վերադառնում է երևանի նախնական վարչության կողմից իրականացվող վերակալարանայան Կալարան համակարգի արվելովում առաջին Զ. Խալարան-երից։

24 Բաց իրական գեղանայան և Խալարան պողոտե, որից գարնամ էն մասերը շենքերում.

1840 թթ. Գաեղում է շուկայից հարավ և Բանդի ու Կալերի թաղերից արևմուտք։ Այստեղ էին գտնվում սասիկանությունը, բուսարանը, դպրոցը, բաղնիքը, հյուրանոցը և այլն։

Թաղաքի հիմնադրման և զարգացման գործում զգալի ներդրում են կատարել Արծրունի տոհմի ներկայացուցիչները։ Միգրոն Արծրունու նախահետնությունը այստեղ հաստատվել են վերաբնակիչներ, իսկ երա եղբոր՝ Բարսեղ Արծրունու միջոցներով կողք-կողքի կառուցվել են զարգացման շենքեր, խանութներ, արհեստանոցներ։

1857—1860 թթ. Նոր Բայազետի զավառապետը՝ Քիջիկոսի իշխան Բաաճակ Արեւյան Աբա-Մինչյանից թելադրանքով բնակավայրի հասարակական կենտրոնի հրապարակի շուրջը կառուցվում են հայրուրի շափ կղզակներ²⁷։

Նոր Բայազետի ազգաբնակչությունը 1822—1870 թթ. ընթացքում ավելի քան կրկնակի աճում է, աների թիվը 500-ից հասնելով 1100-ի²⁸, իսկ բնակիչներին՝ 7500-ի²⁹, էլ ավելի է մեծանում երա Լեւանապոլիսում, երբ 1880 թ. ավարտվում է Ելենովկայից (Սևանից) մինչև այստեղ խճուղային ճանապարհի շինարարությունը։

Այսպիսով, գյուղական բնակավայր հանդիսացող (բնակիչները զբաղվում էին հողագործությամբ և անէրտությամբ) Նոր Բայազետը, պահպանելով իր տնտեսության հիշյալ ճյուղերը, հետադեման ձեռք է բերում վարչական և առևտրական արհեստագործական քաղաքատիպ բնակավայրի նշանակությունը։

Այդ կապակցությամբ էլ XIX դարի վերջին այն ենթարկվում է վերակառուցման։ Գլխավոր հատակագծի իրականացմամբ առաջանում է փոխուղղահայաց փողոցներով կանոնավոր քանց, որոնց ուղղությամբ կառուցված բնակելի տներով սահմանվում է բնակավայրի ինքնատիպ ճարտարապետական զեմքը³⁰։

Բնակավայրի բնույթի վերա հիշատակված փոփոխությունն անգրագործել է Նոր Բայազետի ժողովրդական բնակելի տան ճարտարապետության վրա և հիմք ծառայել երա սասիկանական զարգացման համար։ Եթե վաղ շրջանի բնակելի տները հիմնականում գլխատան տիպին էին պատկանում՝ քարաշեն էին և հողածածկ, երգիկավոր կտրուրով, ապա հետագայում տեղի է ունենում անցում գլխատանից գեպի իր կազմով ավելի հա-

րուտ, բնակելի տնայինները գոմից անջատված, աչպես կալված, կոմպլեքս տուն³¹։

Ավելի ուշ, XIX դարի վերջին և XX դարի սկզբին Նոր Բայազետում սկսվում են արմատավորվել 1—2 հարկանի, քարաշեն, երբեմն երկհանգ կտրուրով, փողոցի կամ քաղի կողմից փայտաշեն պատվարներով ունեցող (ցանցիկն ճաղերով), առանձին զեպներում առաջին հարկում խանութներով, կոմպակտ հատակազածամբ տեղի ջրտաշունչ բնակիչմայական պայմաններին և բնակիչների նկատմամբ համայնապատկանող, զքաղաքային ճարտարապետության որոշ ազդեցությամբ բնորոշ բնակելի տներ³²։

Բնակչության ջրամատակարարումը ապահովվում էր բարձրորակ և սանիտարկ աղբյուրների ջրով։

XIX դարի վերջում և XX դարի սկզբին ավարտվում է Նոր Բայազետի կենտրոնի ճարտարապետական տեսանքի կազմակերպումը։ Պարագծով խանութներով ու արհեստանոցներով շրջապատված հրապարակի արևելյան կողմում կառուցվում է եկեղեցի (1903 թ., հեղ. Վ. Միրզայան), որը տարածականորեն իշխում է հրապարակի վրա։ Մինևույն ժամանակ բարեկարգվում է հրապարակը, ծառադարձվում ու վեր է ածվում ճարտարական ջրտավայրի։

Գտնվա։ Քաղաքայինության նույն առաջադեմական սկզբունքի կիրառման ուղադրով որինակ է Գորիսը, լեռնային Ջանգեղուրի այդ ինքնատիպ և զգալիորեն բնակավայրը, որը միասնաբար կառուցապատվեց համանուն գետակի զեպատեխի հովտում, բնության անկրկնելի հմայիլ միջավայրում։

Այստեղի բնակիչները մինչև XIX դարի առաջին կեսը ուղղում էին գետակի ձախափյա մասում, այժմյան քաղաքի հարավարևելյան կողմում ընկած հին կյորես կամ Ենե գյուղում։ Անհիշելի ժամանակներից եկող ու անձնավային բնակարաններով (աքերներով) հարուստ այս գյուղը թառած էր բարձրորակ արածաք ժայռերով պատած թեք լանդշեյն և լեռնային Ջանգեղուրի մյուս գյուղերի (Խոտ, Ենեքերակ, Երևուհայր և այլն) պես աստիճանաձև կառուցապատմամբ իշխում էր մինչև գետակը։

Բնակավայրի այսպիսի տեղադրության հետեվանքով տառաջացած զովաթությունները թելադրում են մտածել հին Կյորիսը լեռնու և գետակի աչափյա ազատ տարածության վրա Նոր Գորիսի հիմ-

27 Մ. Մեքալյան, Եր. աշխ., էջ 81։

28 Նույն տեղում, էջ 87։

29 Լ. Ս. Եփրեյան, Պաակերազար բնաշխարհի բառաբան, Կենտրոն, 1902, էջ 278։

30 Կ. Ս. Պաղգմյան, Մյուսիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1970, էջ 22։

31 Ս. Վարդանյան, Լալական ժողովրդական բնակիչ տների ճարտարապետություն, Երևան, 1959, էջ 73։

32 Կ. Ս. Պաղգմյան, Եր. աշխ., էջ 86, 186, 194, 221։

Նազարյան ժառին: Որպես այդ գաղափարի իրականացման նախաձեռնողներ Նազեհն են գալիս գաղափարային Մարտաշինի և Մանուշար բնի Մեյիթ-Հյուսիսյանը³¹:

Նոր Գորիսի թաղաքապետությանը սկսվում է նախատար կազմում արժանաչան բարեփոխումների փնտրելը ու մեղմ թերությունները զննելը³²: մինչև Գորիս գետի և գետի հարավ ուղիղ գետից զննվում է Նոր Գորիս կառուցադրումով և զինավոր Հասակագծի Համաձայն³³:

Բնակավայրի Հասակագծային Հենքը կազմում է Նազարյան երկաթուղան (17 մ լայնությամբ) և լայնական (24 մ լայնությամբ) փողոցների կառուցմանը: Երբ աստիճան խուրճի անի Հրապարակում (փոքր շուկայից) գետի արևմուտք, իսկ երկաթուղի՝ արևելք-արևմուտք (փոքր շուկայից) գետի (հարավ) ուղղությամբ: Ուղիղ անկյան տակ որակի Հասակագծով տարանում են թառակուր (106×106 մ) և թառակային (106×212 մ) թաղամասեր:

Նոր բնակավայրի կառուցադրումն սկսվելով 1850-ական թվականներին, ալիքի կազմակերպված ընթացք է ստանում 1870-ական թվականներին, երբ բնակավայրի վարչատնտեսական նշանակությանը անում է Գորիս-Հուշի խոնավային հանապարհի շինարարությանը ավարտելու կապակցությամբ և ալիքի մարզադատ և գետում Գորիսի շուկայական հրապարակում ամրագրաբար կազմակերպված առևտրամասերը՝ շրջակայքի բնակչության և համայնքների համար:

Նոր տեղում բնակավայրն արագորեն սփռվում է զարգացում, Համապատասխանաբար անում է երա բնակչության թվի, 1913 թ. հասնելով 2212-ի³⁴:

